# ԿԱՐԾԻՔ

***Միքայել Գագիկի Մելքումյանի՝ «Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման արդի հիմնահարցերը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ***

Միքայել Գագիկի Մելքումյանի՝ «Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման արդի հիմնահարցերը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը նվիրված է այնպիսի արդիական խնդիրների համապարփակ ուսումնասիրությանն ու հետազոտությանն, ինչպիսիք են «վնաս» հասկացության էության բացահայտումը, իրավաչափ և ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման կառուցակարգերի կատարելագործման այժմեական խնդիրները և նշված ինստիտուտի հետ կապված այլ վերաբերելի հարցադրումները: Ատենախոսի գիտական հետազոտության օբյեկտ են դառել նաև անձի կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման գործող ընթացակարգերը և ներպետական օրենսդրությամբ սահմանված դատական պատշպանության երաշխիքները, ինչն, անշուշտ, նպաստում է ատենախոսությամբ ներառվող թեմաների հետազոտության համընդգրկուն բնույթի ապահովմանը՝ որակապես նոր մակարդակի բերելով դրանում սահմանված եզրահանգումների ամբողջականությունը:

Ատենախոսությունը բաղկացած է երեք գլուխներից, որոնք ներառում են թվով յոթ պարագրաֆներ: Ատենախոսության կառուցվածքը հստակ է, տրամաբանական և համապատասխանում է գիտական աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Նյութը դասավորված է համակարգային սկզբունքով՝ նախ՝ տեսական և մեթոդաբանական հիմքերի բացահայտում, ապա՝ կոնկրետ իրավական վերլուծություններ և եզրակացություններ: Աշխատանքի բաժինների հաջորդականությունը ապահովում է մտքի զարգացումը և ընթերցողի կողմնորոշումը հետազոտության տրամաբանության ծիրում:

Դրվատանքի է արժանի նաև Հեղինակի կողմից աշխատանքի հավելումը վերաբերելի գիտագործնական նյութերով, ինչն, անշուշտ, լրացնում է աշխատանքի ակադեմիական արժեքը: Բացի այդ, պետք է փաստել նաև, որ աշխատանքը գրված է գիտական ընդունելի լեզվաոճով, հստակ և մտքերի համարժեք տեղայնացմամբ:

Միաժամանակ, կարծում ենք՝ ատենախոսությունը զերծ չէ նաև դրա հետագա հաջող պաշտպանության ընթացքը չխաթարող այնպիսի խնդիրներից, որոնց վրա անհրաժեշտություն կա բևեռելու Հեղինակի ուշադրությունը, այդ թվում՝ իր հետագա աշխատանքներում դրանց անդրադարձ կատարելու հնարավոր դիտանկյունից: Մասնավորապես, նման նկատառումները հանգում են հետևյալին.

**1.** Պաշտպանության ներկայացվող առաջին դրույթի շրջանակներում Հեղինակը, անդրադառնալով իրավաբանական անձանց ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտի ներդրման անհրաժեշտությանը, արձանագրում է, որ *պաշտպանության ենթակա է յուրաքանչյուր իրավունք, այդ թվում՝ իրավաբանական անձանց ոչ նյութական իրավունքները, և այն դեպքերում, երբ ոչ իրավաչափ միջամտությունը տեղի է ունենում անձի մի քանի իրավունքների նկատմամբ, վերականգնման ենթակա է դրանցից յուրաքանչյուրը:* Մինչդեռ, Հեղինակի կողմից առաջարկված հիշյալ մոտեցումն առավել համընդգրկուն բնույթ կկրեր, եթե վերջինս հավելյալ հստակեցներ, թե իրավաբանական անձանց ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտն ի՞նչ հիմքերով չի համարում արդեն իսկ ներդրված ՀՀ օրենսդրությամբ, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 104-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *անհատ ձեռնարկատիրոջ և իրավաբանական անձի գործարար համբավը արատավորելու հետևանքով նրանց պատճառված գույքային վնասը, ներառյալ՝ բաց թողնված օգուտը, ենթակա է հատուցման՝ սույն օրենքի 98-99-րդ հոդվածներին համապատասխան (հետևանքների վերացում, վնասի հատուցում դրամական միջոցներով):*

Ավելին, նույն հոդվածի ուժով՝ անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը միաժամանակ կարող են դիմել իրենց գործարար համբավի պաշտպանությամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-3-րդ, 5-6-րդ մասերին համապատասխան:

**2.** Աշխատանքն էականորեն կշահեր, եթե պաշտպանության ներկայացվող 4-րդ դրույթի շրջանակներում Հեղինակի արձանագրած օրինաչափ դատողությունները զուգակցվելին նաև պրակտիկ օրինակներով, որոնց շրջանակներում կյանքի իրավունքի միջամտության դեպքերի համար պետք է պատասխանատվություն կրի պետությունը որպես վարչարարության իրականացման համար պատասխանատվություն կրող սուբյեկտ: Ասվածն առավել առարկայական է դառնում հատկապես այն հանգամանքի համատեքստում, որ կյանքի իրավունքի միջամտություն ենթադրող նման դեպքերը, որպես կանոն միջնորդավորվում են նաև իրավունքի այլ ճյուղերի գործիքակազմով, որի համատեքստում միշտ չէ, որ հնարավոր է տարբերակել զուտ վարչարարական բնույթ կրող կառուցակարգերը:

3. Պաշտպանության ներկայացվող 5-րդ դրույթի շրջանակներում Հեղինակն առաջարկել է, որ *վնաս կրած սուբյեկտը բավարարվի միայն վնասի հատուցման պահանջ ներկայացնելով, իսկ վնասի հատուցման եղանակների ընտրությունը, ըստ այդմ, նախկին դրության վերականգնման հնարավորությունը կամ արդյունավետությունը, դրան համարժեք այլ դրության վերականգնման հնարավորությունը, բավարարությունը կամ ավելի մեծ ծախսերի կատարման անհրաժեշտությունը գնահատվեն իրավակիրառողների կողմից:*

Աշխատանքն էականորեն կշահեր նաև, եթե Հեղինակը հիմնավորեր՝ նշված խնդրի լուծման համար բավարար չէ՞ արդյոք գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման վարչադատավարական սկզբունքը, և եթե ոչ, ապա իրավակիրառողին իրավունքների պաշտպանության եղանակը վերջնականապես

սահմանելու լիազորություն ընձեռելը չի՞ հակասում արդյոք վարչական դատավարությունում որոշակիորեն գործող տնօրինչականության սկզբունքին:

Չնայած վերը հիշատակվածին՝ աշխատանքի բովանդակության վերլուծությունն ու համադրումը նման աշխատանքներին ներկայացվող պահաջներին թույլ է տալիս եզրակացնելու, որ Միքայել Գագիկի Մելքումյանի՝ «Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման արդի հիմնահարցերը» թեմայով թեկնածուական ատենախոսությունը ԺԲ.00.02 մասնագիտության շրջանակներում պարունակում է հայրենական իրավաբանական գրականության մեջ վարչարարության պատճառված վնասի հատուցման ինստիտուտի հետ կապված կարևոր նշանակություն ունեցող մի շարք խնդիրների՝ գիտականորեն հիմնավորված լուծումներ:

Աշխատանքի գիտական արժեքը, կարծում ենք, թույլ է տալիս Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ իրավագիտության 063 մասնագիտական խորհրդին՝ Միքայել Մելքումյանին շնորհելու հայցվող ԺԲ.00.02 թվանիշով իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

**ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Տ.Ա.Խաչիկյան**

09.06.2026 թ.

Ստորագրությունը հաստատում եմ՝ Մ. Իսահակյան